Է. ՏԱՐԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 28 ԱՊՐԻԼ 1904 Թիւ 613

ՀԱՅԱՆՈՒԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ռանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ հ. երեսին առնչի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

Վառնայի համար ձեռքի 10 գանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՆԻ ՏԱՐԱԿՈՒՆԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalemgarian, Mechitharistenpasse 4. Vienna (Autriche)

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրուրիւնք եւ չեկ տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ՍԱՍՆՈՅ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Ապրիլ 25ին Պոլսէն Վիէնա կը հեռագրեն հետեւեալը.

«Հայաստանէն եկած տեղեկութիւններու համեմատ, Թրքական զօրքերը շրջապատած են Անդրանիկը իր հրոսախմբովը միասին».

Պուլ. հեռագրական գործակալութիւնը երկու հեռագրով հետեւեալը կը հաղորդէ Ապրիլ 24ին.

«Երեկ Բիթլիսի վալին հեռագրեր է որ ինքը, երկու հայ եպիսկոպոսներու և դատախազի մը հետ միացած զօրքով գրաւեր են կելիկուզանը, որ կը գտնուի Սասնոյ շրջանի մէջ. իսկ երկրորդ գունը երկու վաշտերով գացեր է Տալվորիկ, Անդրանիկի ամրացած բանակը շրջապատելու համար։ Վերջերս տեղի ունեցած ճակատամարտերու մասին մանրամասնութիւնները կը պակսին».

«Բիթլիսէն եկած հեռագիր մը կիմացնէ որ Կելիկուզանի մօտ թուրք զօրքը ընդհարում ունեցել է հայ ապստամբներու հետ. 7 զինուորներ սպաննուած են և 13 վիրաւորուած։ Հայերու մեծ մասը փախուստ տուեր է։ Դերի ինկածները կը պատմեն որ հայերը մեծ կորուստ ունին».

Կ. Պոլսէն «Նոյէ Ֆրայէ Բրէսսէ»ին կը հեռագրեն.

«Կ. Պոլսոյ Անգլիական դեսպանին առաջարկութեան վրայ, թէ պէտք է միաբան դիմումներով հայկական շարժումներու ծաւալման և քրտական գրգռմանց առջեւը առնել, Ֆրանսայի և Ռուսիոյ դեսպանները իրենց կառավարութեանց առաջարկեցին տեղական հիւպատոսներուն հրահանգներ տալ, որ թրքական պաշտօնեաներու հետ այդ մասին պէտք եղած քայլերը առնեն։ Այս ամէնը մինչեւ հիմա գործադրուած պիտի ըլլային, սակայն ուշացաւ, որովհետեւ Պիթլիսի համար նշանակուած ռուսական հիւպատոսը դեռ իր պաշտօնատեղին չէ հասած։ Եւ որովհետեւ այդ միջոցին արդէն կատարուած են զինուորական գործողութիւններ ռուսական շրջանակները միջամտութիւն մը յարմար չեն դատեր։

Վերջին օրերս Սասնոյ մէջ տեղի ունեցած կռիւներուն մասին հաստատ լուրեր դեռ չեն հասած. Անկասկած կռիւներուն մասնակցած են և քիւրտերը։ «Կէնջ»ի (Պիթլիսի վիլայէթ) միւֆէսարբիքը քանիցս հեռագրած է, որ հայկական շարժումներու առիթով մահմէտականները գրգռուած են և անկարգութեանց առջեւը առնել դժուար պիտի ըլլայ».

ԳՈՐԾՈՎ ՕԳՆԵՆՔ

Սասունից եկածները տեղեկութիւնները պարզօրէն ցոյց են տալիս որ այնտեղ գործերը հետզհետէ լուրջ և ծանր կերպարանք են ստանում, որովհետեւ թուրք զօրքերի և հայ ապստամբների միջեւ գտնված տարածութիւնը հետզհետէ փոքրանում է առաջինների յառաջխաղացման պատճառով։

Թուրք կառավարութիւնը, ըստ երեւոյթին սանձահարված Անգլիայի և Ֆրանսայի կառավարութիւններից, խուսափում է կոտորածներից. բայց երբեք չէ ուզում դադար առնել, այլ իր զօրքերին, քաղաքական պաշտօնեաների և հայ եպիսկոպոսների հետ առաջ է մղում դէպի Սասնոյ բարձունքը, որպէս զի ժամ առաջ կիսաբոնի ու կիսախաղաղ միջոցներով ճնշէ Սասունցիներին, ընկճէ Անդրանիկին և նրա ընկերներին. իհարկէ չը մոռանալով ընդհարման պատրւակներ ստեղծելու մի կերպ Անդրանիկին և ընկերներին ոչնչացնելու, կամ նրանց Սասունի անառիկ վայրերից փախցրնելու դիտաւորութեամբ։

Սակայն, որչափ մեզ յայտնի է, թէ Անդրանիկը, թէ նրա ընկերները և թէ Սասունցի քաջերը պրամադիր չեն անձնատուր լինելու, որովհետեւ նրանք համոզված են թէ թուրք կառավարութեան միակ նպատակն է այս անգամ ճզմել Սասնոյ քաջերին, ու նրանց անառիկ հայրենիքում միջոցներ ըստ ղծել Սասունը մշտապէս զսպված պահելու համար։

Արդէն ընդհարումներ տեղի ունեցել են հայ ապստամբների և թուրք զօրքերի միջեւ. բայց կարող են պատահել աւելի մեծ ընդհարումներ, քանի որ, ինչպէս հեռագիրն է հաղորդում, Անդրանիկը «ամրացած բանակ ունի», և շրջապատված է թուրքերից... իսկ ամրացած դիրքերը, ժանաւանդ Անդրանիկի նման քաջերից դիւրութեամբ չեն առնվում։

Այսպէս թէ այնպէս ապստամբութեան դրօշը պաշտօնապէս պարզված է Սասնոյ կրծքի վրա, ու հայ ժողովուրդը ամեն ճիգ պէտք է թափէ որ նրա ծածանումը երկարատեւ լինի։

Անուրանալի ճշմարտութիւն է որ երկարատեւ դիմադրութիւնները միայն արդիւնաւէտ լինում ապստամբ ժողովրդների համար, որովհետեւ պետութիւնները միջամտում են միայն այդ տեսակ պարագաներում։

Սասունը տասը տարի առաջ իր դիմադրութեան շնորհիւ մեզ տուեց Մայիսեան ծրագիրը. ի՞նչի չը կարծել որ այսօր նրա երկար դիմադրութեան շնորհիւ մենք կարող ենք ունենալ այդ ծրագրի գոնէ մասամբ իրագործումը, եթէ ոչ ամբողջովին։

Քաղաքական պայմանները աւելի վատ չեն, քան սրանից տասը տարի առաջ։ Ընդհակառակը, այսօր աւելի բարեյաջող կարելի է համարել, որովհետեւ մեր ամենամեծ թշնամին, ռուս կառավարութիւնը, որի հրամանով միայն Սուլթանը յանդգնեց Մեծ կոտորածները սարքել, մեծ փորձանքի մէջ ընկած լինելով իր գլխին է դարման փնտռում, ու միջոց չունի խանգարելու մեր բարեացակամ պետութիւններին։

Սակայն մեր բարին կամեցող պետութիւններն էլ չեն միջամտի եթէ հայկական մեծ շարժումներ, երկարատեւ դիմադրութիւններ տեղի չունենան։

Ուրեմն մեզ ինչ է միայն գործել, արագութեամբ, եռանդով. գործով օգնութեան հասնել քաջ Սասունցիներին, արձագանքել նրանց կռիւն ու դիմադրութեան։

Այո, գործով, կենդանի և շուտափոյթ գործով մենք կարող ենք միայն Սասունցիների օգտակար լինել։

Խօսել ենք շատ, գրել ենք շատ, դրամ չը տուողներին անիծել ենք շատ. բայց մեծ խոչնդոտները իրենց ահռելիութեամբ դանդաղեցրել են մեր գործը. այսօր պէտք է լարել բոլոր ուժերը, պէտք է տապալել խոչնդոտները, ու գործով արձագանքել Սասունին. եթէ ուզում ենք Սասունը փրկել, եթէ ուզում ենք հայկական հարց կոչված հանգոյցի մի կապը գոնէ եւս քանդել։

ՎԱՐԴՕ

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԵՐ

—)o(—

Հսկայ Ռուսաստանը ծովի վրայ իր կորսուած փառքը ու պատիւը վերականգնելու համար ծովակալ Մաքարովը ղրկեց Պորտ-Արտուր։ Մաքարով Ռուսաստանի յոյսն էր. բայց Ռուսաստանը չուտով յուսակտուր եղաւ։ «Պեթրոպաւլովսք», քաջարի ու յանդուգն ծովակալի հպարտ դրօշակիրը թշնամւոյն ճարպիկորէն նեղուց քին անցքին մէջ գետեղած մէկ ականին հանդիպելով ջուրերու կուլ դարձաւ իր հետ թաղելով նաեւ Մաքարովը։ Արկածի լուրը կայծակահար ըրաւ ընդարձակաձաւալ երկիրը։ Համայն Ռուսիա ողբաց ինկած հերոսը, եղած կորուստը. Ցարը հոգիին խորերէն վրդովուեցաւ, Ցարուհին լացաւ։ —Ի՞նչ ընենք այդ է եղեր Աստուածներու արդար տնօրինութիւնը։ Օրհնեալ ըլլայ անոնց կամքը։— Հայոց ծերունի ու աչեւոր

հայրապետն ալ վրդովուեցաւ ու լացաւ կօզակներու դնդակով խորովուած իր քաջերուն, գողցուած ու կողոպտուած իր դարաւոր իրաւունքներուն համար, բայց այն ատենները Տարտչատի մէջ խնճոյքներով ու հացկերոյթներով զուարճացող Ցարին համար այդ ամէնը կատակ մը կերեւար։

Մաքարով զոհը դարձաւ ռուսական յոռի վարչութեան։ Ան քաջ էր ու արի, յախուռն էր և տաքարիւն, այո՛, զինուորի մը համար թանկագին առաքինութիւններ բայց Բօրթ-Արթուրի մէջ պէտք էր պաղարիւն ու հաշուող առաջնորդող մը։ Նապոլէօնի ռազմական ամենամեծ առաւելութիւններէն մէկն ալ այն էր, որ ան տիտէր ամէն կէտի վրայ, տեղական պահանջներուն յարմար մարդիկ դնել։ Ռուսիա սխալած էր և մեծ եղաւ պարտութիւնը։ Ճաբոնիա ծովի վրայ դարձաւ բացարձակ տէր, դիւրացուց ցամաքի վրայ իր գործողութիւնները, Եալուի վրայ զարկաւ ռուսերը և այսօր ցամաքէն ու ծովէն կը պաշարէ Բօրթ-Արթուրը։

Ռուսերու երկրորդ մեծ պարտութիւնը տեղի ունեցաւ Եալուի ափերուն վրայ։ Ճաբոնացին ըբ,—սկիզբէն մինչեւ վերջը արհամարուած այդ ասիացիները—ցամաքի վրայ ալ առաջին բաղխման մէջ տարին նմանը քիչ տեսնուած փառաւոր յաղթանակ մը։

Ռուս չօվինիստ մամուլը ժողովուրդը երազներով կօրօրէր, առարկելով թէ վազը ճաբոնացիները ցամաքի վրայ կերեւան և ռուս քաջարի բանակէն զարնուելով գլխիկոր ու խելակորոյս ետ կը նահանջեն։ Պատահեցաւ—զոնէ առաջին բաղխման մէջ—ատոր ճիշտ հակառակը։

Եալուի վրայ կրած պարտութեան լուրը կայծակնահար ըրաւ ամբողջ Ռուսիան ու ցնցեց իր հիմքերէն։

Հինգ օր շարունակ տաք կռիւ մղելէ ետք ճաբոնական առաջին զօրաբանակը զօրավար «Կուրօկի»ի հրամանատարութեան տակ ռուսերը ետ մղելով անցաւ Եալու գետը։ Ինչպէս Թօկիօ ծովին վրայ նոյնպէս ալ Կուրօկի ցամաքին վրայ կը վայելէ մեծ համբաւ։ Ան, 65 տարեկան խոհուն մարդ մը, կը սերի ճաբոնական զինուորական հին ընտանիքէ մը և ունի ազնուական արիւն։ 189։ին չինական պատերազմի ատեն կազմակերպեց ճաբոնական բանակը և հոգաց անոր բոլոր պէտքերը։ այս ամէնը անթերի կերպով կատարելէ ետք փութաց կռուի վայրը։ ուր նա ցոյց տուաւ փայլուն ընդունակութիւններ ու ստացաւ մեծ հռչակ։

Կուրօկի առաջին անգամ գրաւեց Կիուլիէնչէնկի դիրքերը։ ուր ռուսերը ամրացած էին։ Կիուլիէնչէնկ կը գտնուի Եալուի արեւմտեան ափին վրայ։ գետին ծով թափած տեղը։ Իսօ գետը անցած ատեն ճաբոնական հետեւակ զօրքը մինչեւ ժէջքը ջուրի մէջ թաղուած էր։ Գետը անցնելու համար ճաբոնացիները առաջուց տեսած էին հարկաւոր բոլոր պատրաստութիւնները։ Անոնց կողմէ ամէն քայլ լաւ խորհուած և լաւ ծրագրուած էր։ Անոնք իւրաքանչիւր գործ կը դնէին պատերազմական գիտութեան վերջին միջոցները։ Յաջողութիւնը ամէն կերպով ապահովելէ ետք ճաբոնական հետեւակներու գունդը յարձակում գործեց ռուսական զօրքի ձախ թեւին վրայ։ Ռուսերը յանկարծակիի եկան, որովհետեւ այդ կողմէն յարձակում չէին սպասեր և անհոգ էին մնացեր։ Ռուսական ձախ թեւը շուտով տեղի տուաւ և ճաբոնացիներուն ձեռքը ձգեց Կիուլիէնչէնկի բարձրաւանդակը։

Ճաբոնական հրամանատարները՝ ինչպէս կը տեսնուի յառաջ գացած են սիստէմատիկ կերպով։ Ատոր ճիշտ հակառակը ըրած են ռուսական զօրքի առաջնորդողները։ Անոնք Եալուի վրայ յետաձգած են շատ կարեւոր պատրաստութիւններ։

Եալուի բերանը երկար ատեն իրենց ձեռքն էր և չէին խորհեր այդ տեղերը ականներ դնել, զոնէ թշնամական նաւատորմիղին մերձենալուը արգիլելու համար։ Եւ Ճաբոնացիք գիտցան գործուած այդ սխալէն օգտուիլ։ Ճաբոնական յածակաւորները կամուրջներ շինելու, զօրքը գետէն ապահով կերպով անցնելու համար փութացեր էին կռուի վայրը և մատուցին մեծ ծառայութիւն, նոյնիսկ իրենց թնդանօթներով հարուածելով ռուսական դիրքերը։

Ճաբոնցիներու յաղթութիւնը կատարեալ էր Յաջողութեան լուրը մեծ ոգեւորութիւն յառաջ բերած է Թօքիօյի մէջ, իսկ պարտութեան լուրը չանթառարած է Պետերբուրգը։ Նոյնիսկ չուարած կերեւի Կուրապատկին։ Ան Ծարին կռուի ելքի մասին տեղեկագրելով պարտութեան յայտնքը կը ձգէ Եալուի հրամանատար զօրավար Զասուլիչի վրայ։ առարկելով թէ ինք հրման առած էր կռուի չի բռնուիլ և Զասուլիչ անհնազանդ գտնուած է։ Բայց երբ Զասուլիչ յաղթէր անտարակոյս Կուրապատկին այդպէս չպիտի տեղեկագրեր պարտուած գեներալի մասին և պիտի ուզէր յաղթութեան դափնիները իր ճակատին վրայ հիւսուած տեսնել։

Ռուսերը իրարանցման մէջ են։ Մամուլը ժողովուրդը չը վնասեցնելու համար չուզեր պարտութիւնը խոստովանիլ ու յառաջ կը բերէ զանազան պատճառաբանութիւններ։ Հոն կըսուի, թէ ռուսերը միտք չեն ունեցած Եալուի անցքը պաշտպանել, ընդհակառակը անոնք ուզած են ճաբոնցիները Մանչուրիա քաշել եւ այն տեղ զարնել։ Բայց հարցնենք թէ իրողութիւնը այդպէս ըլլար, որով ետեւ այդ պարագային ռուսերը հինգ օր շարունակ կատաղօրէն չի պիտի դիմադրէին, չի պիտի սային անագին զոհեր եւ չպիտի աւելցնէին ծովային այնքան պարտութիւններու վրայ ցամաքի վրայ ալ պարտութիւն մը։ որու բարոյական ազդեցութիւնը մեծ նշանակութիւն ունի պատերազմի ընդհանուր ելքին համար։ Հիմա արդէն զօրավար Օկուի բանակը կը քալէ Գօրտ—Արթուրի վրայ։ ուրտեղ գործողութիւնները աւարտելէ վերջ պիտի միանայ Կուրօկիի առաջին զօրաբանակին հետ եւ միահամուռ ուժերով ճաբոնցիները պիտի քալեն Կուրապատկինի դէմ։

Ռուսական զոհերու թիւը մեծ է, անոնց մէջ կը գտնուին սպաներ եւ հրամանատարներ։ Փերի ինկած են 20 թնդանօթներ։ Ռուսերը միակ բան մը չեն մուցած։ Անոնք թշնամւոյն ձեռք ձգելէ առաջ փճացուցած եւ անգործածելի դարձուցած են թնդանօթները։

Ճաբոնացի սպաննուած զինուորներու թիւը ռուսներէն փոքր է։ Կռուի միջոցին սարսափելի ազդեցութիւն գործած են ճաբոնական թնդանօթները՝ ամէն կողմ մահ տարածելով եւ մարդկային դիակներ սփռելով։

Ռուսական պարտութիւնը Եալուի վրայ կատարեալ էր։ Այս գետի ափերուն վրայ ինկաւ ու ջախջախուեցաւ մեծ հսկան, իր հետ ինկաւ եւ իր վարկը ու համբաւը։ Ճաբոնցիները ասիացի կղզիաբնակ այդ պզտիկ ժողովուրդը։ իրենց տարած փայլուն յաղթանակներով այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհին հիացմունք կը պատճառեն ու իրենց կողմը կը գրաւեն ամէն համակրութիւն։

Ռուսիային պէտք էր այսպէս դասմը։ Անոր աշխարհակալ ամբարտաւանութիւնը ծայրայեղութեան էր հասած այլեւս։ Ան զոհն է իր ներքին յոռի վարչութեան...

Մարզպետունի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պաղտվ, 22 Ապրիլ 1904

Զատիկ առաւօտն է, երկաթուղին կանգ կառնէ Պաղտվի կայարանը, անմիջապէս կը փութամ տեղւոյն Հրեշտակապետ եկեղեցին, որը լիւ է տեղացի եւ մի քանի գաղթական հաներով։

Եկեղեցին շինուած է հայ. փոզոյն վրայ, ընդարձակ պարտէզի մը մէջ, ճարտարապետական բաւական նուրբ դրուագներով։ Երկու սիւրուն ու բարձր զանգակատուներով որոնք կարծես կը յիշեցնեն երկու հրեշտակապետները։ իր յատակագիծը ճիշտ խաչի մը ձեւն ունի, որու վրայ շինուած է շէնքը, սիրուն ու փառաւոր։ Տեղւոյս եկեղեցին միակ հայ եկեղեցին է ամբողջ Ռումանիոյ մէջ իր գեղեցկութեամբը։ Ներսի կողմը, պատերու նկարներու ճոխութիւնը, քիչ մը չափազանցեալ է, այնպէս որ նորեկի մը համար դժուար կըլլայ հաւատալ անմիջապէս թէ հայ եկեղեցոյ մը մէջը կը գտնուի։ Խորանի դէմի կողմը նկարուած են մեր պապա Հայկ նահապետի եւ Ջօրավար Վարդանի իւղաներկ նկարները հոյժկու եւ դիւթիչ։

Կառուցուած է 50ական թուականներէն եւ վերջի տարիներս ներկուած, հայ արուեստագէտի մը կողմէ. ծախք եղած է միայն վերանորոգելու համար 6000 ֆր. որը հաւաքուած է ձեռամբ եւ ջանիւք տեղւոյս Տէր Գրիգոր քահանայ Լազարովիչի՝ բնիկ Սուչաւացի։ իր պաշտօնին գիտակից հոյժկու եւ յաղթանդամ եկեղեցական մըն է։ կառավարութեան քովը մեծ յարգ եւ հեղինակութիւն ունի, որուն ապացոյցները տուած է արդէն քանիցս։ Նաեւ վերջերս ալ վարձատրուած լաւ ջախջախով որը միայն կարող եկեղեցականաց կը տրուի։

«ԿՐԱԿՈՏ ՁՈՒՐԸ»

(Սիբիրի կեանքէ)

(Թարգ. ռուսերենից)

Բ.

(Շար. նախորդ թիւին

Արեւը մօտենում էր մուսքին՝ վարդագոյն ցողեր շաղելով ամպերի քուլաների վրա, որոնք կարծես երկնքից կախված լինէին։ Նա շուտով թագնվեց բարձր ու կոլոր բլուրի ետեւում, ուր իսկոյն փայլեցին կարմրավառ բոցեր։ Ու յանկարծ այն բոցավառ տեղից սկսեցին բարձրանալ ծուխի կծիկներ, բլուրը սկսեց հրաբորբոք ծխալ. կարծես երկնքի տակ ձիւնը հալվելիս լինէր։

«Ահ, միթէ ձիւնը կարո՞ղ է այրվել» մտածեց օղուց չշմած Բօյագիրը, հրճվելով տարրերային այդ հրդեհով։ Ծուխի քուլաները առաջ էին շարժվում, նարնջագոյն կրակները բորբոքվում էին, ու բոցերը աղմուկի նմանում։ կարծես անթիւ հրեղէն լեզուներ միացած խօսում էին, բայց ամենամէկը առանձին բան էր ասում։ Նրանց անկապ խօսքերից սաեղծվեց մի քառս, որ տակն ու վրա արեց ամբողջ տուն։ դրան. կարելի էր կարդալ որ եղջերուների անտեսանելի առագին հօտեր վազում էին ձիւնակոյտերի վրայով. ու իրենց սմբակները սառած գետնին եւ եղջիւրները իրարու զարկելով որոտացնում շրջակայ տափարակները. ճիշդ հրդեհի ծխից յանկարծակի եկած գայլերի ոռնոցն էր օդը թնդացնում կարծես։ Բայց յանկարծ հրդեհը սկսեց մեղմանալ, կարծես մի աներեւոյթ ձեռք վրան չուր թափելիս լինէր։ Աղմկալի ու անկապ խօսքերը դադրում էին... Երկինքը սկսեց մթնել, ծխի քուլաները, կարծես մի աներեւոյթ ծանրութիւնից ճնշվելով փռվում էին դեռնի վրա, իսկ ձիւնակոյտերը շարժվում ինչպէս քամուց հալածված աւազի ալիքներ։

—Պուրգա(*)...

Այս խօսքը դուրս թռաւ Բօյագիրի բերանից, բայց ոչ իրր վախի արտայայտութիւն։

Նա սկսեց զուարթօրէն դիտել կատղած տարերքի կելպարանքը, որը Բօյագիրին չէր շփոթեցնում, քաջութիւնից չէր զրկում, ինչպէս Լանդուրի կելպարանքը։

Այս կերպարանքը, որ մինչեւ հիմա պայծառ, հեզ էր, ու ծովի կապտութեամբ, գարնան ծաղկի փայլուն զարթօրութեամբ վառվռուն աչքեր ունէր, յանկարծ խոժոռվեց, դարձաւ անհաղորդ. կորցրեց իր փայլը. ճերմակութիւնը եւ կարմրութիւնը. նա հետզհետէ խստանալով աւելի դաժան էր դառնում... մթագնում... Շարժուն ձիւնակոյտերը ամէն կողմից յարձակվում էին երիտասարդ սամոյեդի վրա եւ սպառնում նրան ձիւնաթաղ անել։ Բայց Բօյագիրը փորձ մարտիկ էր. նա վարժ ձեռքով, քամու կողմից, սահնակը կողքի վրա շուռ տուեց, ապրանքը եւ օգին կապեց տախտակներից, կաչիով ծածկեց, եղջերուներին էլ սահնակի կողքին կանգնեցրեց, այնպէս որ ստիպվեց մի եւանկիւնի պարիսպ։ ինքն էլ նստելով եւանկիւնու մէջտեղը։ գեանի վրա, մէջքը դէմ տուեց քամուն։

Կարծես թէ փոթորկի վայրը նրան աւելի զարթութիւն պաճառեց։ Նա կոկորդային ու ձիգ ձայնով ըսկսեց երգել իր հայրերի երգը։

Նա երգում էր լայնատարած տունդրայի, կապոյտ ծովի, սառցաբեռներով լի, երկնքի պէս մաքուր գետերի, քաջ որսորդի նիրհի նման խաղաղ լճերի, երկարատեւ ձմրան ասպարերի, ամռան մուտք չը մտնող արեւի, ճերմակ գիշերների, արշալոյսի եւ վերջապէս այն ամենի մասին։

Ո՞ւ է մեկը գովելու ունակութիւնը չունիմ, սակայն ճշմարտութիւնն ալ չեմ սիրեր ծածկել. արդարեւ տեղւոյս քահանան իր հօտին հովիւն է, բառին ընդարձակագոյն առմամբ։

Այս առթիւ, տեղն է չեշտել Թօմանի տխրահռչակ քահանայի եւ թաղական խորհրդի աղագաւ ընթացքի մասին, որը դէպի բարոյական անկում կը տանի։

Թոման եւ Պագով իրարու մօտ քաղաքներ են. բայց որքան տարբերութիւն, հոս կայ հայ կեանք, եկեղեցի. թաղականութիւնն ամենն ալ լուրջ եւ կարող անձեր, որոնք ի պահանջել հարկին իրենց անձնականէն կը մատրեն եկեղեցւոյ պարտքերը շատ անգամ։ Որչափ զանազանութիւն հոս եւ հոն. Պագով կենդանի հայութեամբ, Թոման մեռած ազգութեամբ. Պագով կը շարժի, Թոման կը թաղուի լափիւրինթոսէ. Պագովցին իր հայութիւնը պարծանք կը յիշէ օտարներու առջեւ, մինչդեռ Թոմանցի հայը կը կարմրի... այս առթիւ կուզեմ գրել յետոյ։

Վերջերս Թումէն կոռավարութենէն տեղւոյս եկեղեցին իմացուցած ըլլալով թէ՝ Վահան վարդապետ Յակոբեանը պիտի այցելէ քաղաքս, տեղւոյս հայերը առաջնորդութեամբ Տ. Հօր, կլորիկ գումար մը հաւաքեցին իրենց մէջէ, եկող եկեղեցականին վայելուչ ընդունելութիւն մը ընելու համար. սակայն ցաւալի է ըսել թէ՝ հակառակ հաղորդուած տեղեկութեանց եւ պաշտօնական թերթերու յայտարարութեանց, տակաւին ո՞ւ է մեկը ներեցաւ մեր եկեղեցական հորիզոնին վրայ։ Մեր Գլխոյ պատրիարքարանը ե՞րբ պիտի արդեօք կարգադրէ Թոմանիոյ այցելու հովիւի խնդիրը. փափաքելի է որ ժամ առաջ կարգադրութիւն մը ըլլար այս մասին։

Ասլան

1904 Մարտ 21/8 Պարիզ

Կովկասում արդէն ուրախութեամբ կարդացած լինելով Լոզանի հայկական դպրոցի մասին, դէպի Պարիզ ալած ճամբորդութեանս միջոցին փափաքեցի մի քիչ ճանապարհս չեղելով անձամբ տեսնել այդպիսի մի հիմնարկութիւն, և նրա մասին մօտէն զգաւոր կազմել։ Իմ այս տողերով պարտք եմ համարում հաղորդել իմ տպաւորութիւնները, և խնդրում եմ որ բարի գանուիք մի փոքր անկիւն տալ նրանց ձեր պատուական թերթի սուղ էջերում։

Թէեւ անծանօթ էի Լոզանին, բայց և այնպէս շատ դիւրութեամբ կարողացայ գտնել դպրոցը, որը գտնւում է քաղաքից մի քիչ դուրս, մի գեղեցիկ ու բարձր գիրքի վրայ, ծառաստաններով շրջապատած և Ալպեան ձիւնապատ լեռների ինչպէս և կապոյտ Լեմանի վրայ հիանալի ընդարձակ տեսարանով։

Երբ դպրոցը մտայ, մի սպասուհի առաջնորդեց ինձ ընթերցասրահը, որի տեսքը մեծ ուրախութիւն պատճառեց ինձ հէնց առաջին քայլից։ Այնտեղ բոլորը, պատերի նկարներից սկսած մինչեւ քսանից աւելի հայ թերթերը ինձ ցոյց էին տալիս որ իրօք հայ մթնոլորտի մէջ էի գտնւում։

Ընթերցասրահում մի քիչ սպասելուց յետոյ հիմնարկութեան յարգելի տեսչին՝ Պ. Մ. Նալբանդեանի հետ պատիւ ունեցայ ծանօթանալու։ Պէտք է ասել որ յայդէլի պարոնը շատ լաւ տպաւորութիւն արեց իմ վրայ իւր ընդհանուր արտայայտութեամբը, ակնոցների տակից փայլող խելօք և վառուն աչքերովը և իւր եռանդուն և միանգամայն համեստ բնաւորութեամբը։ Նրա հետ իմ ունեցած խօսակցութիւնը բոլորովին հաստատեց իմ առաջին տպաւորութիւնը. ես շատ ուրախ էի տեսնելով ա՛յդքան զեղեցիկ և օգտակար մի գործի գլուխ նրա նման կարող, հասկացող և վստահելի մի վարիչ։ Պարոն տեսուչը գոհ էր երեւում ամեն կողմից ընդունած քաջալերական ցոյցերից։ Նա մեծ յոյս է տածում որ իւր վարած հիմնարկութիւնը մօտիկ ապագայում մեծ ընդարձակութիւն և կարեւորութիւն կստանայ ու կարող կը լինի գործադրել ամբողջութեամբ իւր օգտակար ծրագիրը։

Բացի այս բոլորից անսպասելի և կրկնակի ուրախութիւն զգացի իմանալով որ դպրոցը մօտ ժամանակամիջոցում կունենայ իւր գիտական օրկանը. արդարեւ մի քանի ամսից լոյս է տեսնելու «Գիտութիւն» անուամբ մի պատկերազարդ ամսաթերթ որի նպատակը լինելու է գիտական գործնական ծանօթութիւններ տարածել ժողովուրդի ամեն խաւերի մէջ։

Այս բոլոր ուրախալի տեղեկութիւններից յետոյ մեր գալով դպրոցի ամեն մասերում վերջին աստիճան գոհ մնացի իմ այցելութիւնից, հրաժեշտ տուեցի Պ. Նալբանդեանի ի սրտէ շնորհաւորելով նրան իւր վարած գեղեցիկ և ամենաօգտակար գործի համար, որին կատարեալ յաջողութիւն եմ մաղթում։ Հայկական դպրոցը արժանի է ամեն քաջալերութեան և վստահութեան։

Աւելորդ եմ համարում գրել ձեզ նաեւ Լոզանի բնական գեղեցկութեան, նրա շքեղ և բարեկազմ դըպրոցների և նրա զարգացած միջավայրի մասին. այս բոլորը արդէն քաջ ծանօթ է Ձեզ։ Շատ ուրախալի է որ հայկական դպրոցը հաստատուած է այդպիսի ամենայարմար և առողջ միջավայրում։

Պ. Մելիքեան

Աթէնք 19/4 2/5 1904

Ազգային ներկայ ճգնաժամային վիճակին մէջ, երբ ամէն հայ գաղութ իր նուէրները կը փութացնէր Հ. Յ. Դաշնակցութեան գանձանակը, ի նպաստ երկրի կուսակցների, Յունաստանի փոքրիկ գաղութն ալ անտարբեր ու անմասն չը մնաց, ու մի գեղեցիկ և օրինակելի անակնկալով ցոյց տուաւ իր զարթնումի նշանները։

Հ. Յ. Դ. Յունաստանի «Կիլիկիա» խմբի ընկերները վերջերս գաղափարը կը յղանան, Սանոյ քաջարի ֆէդայիներին ի նպաստ հանգանակութիւն մը բանալ, շատ քիչ բացառութեամբ՝ Բիրէօնի և Աթէնքի ազգայինները սիրով կը մասնակցին բացուած հանգանակութեան, որը 2-3 օրուայ ընթացքի մէջ կը հասնի 742 դրամ. գումարի։

Համեմատելով տեղւոյս մէջ մինչեւ ցարդ կատարուած ուրիշ բարենպատակ հանգանակութիւնները՝ այս հանգանակութեան հետ, վերջինս եզակի տեղ մը կը գրաւէ։

Այս յաջողութիւնը թէեւ անակնկալ մըն էր Դաշնակցական ընկերների համար, բայց իրականութիւնը ցոյց տուաւ թէ՝ հայ ժողովուրդը, զրկուած իր հայրենիքէն, ապրելով օտար միջավայրերի մէջ չէ կորուսել սակայն իր ազգային ցաւի գիտակցութիւնը, և նա խորապէս համոզուած յեղափոխութեան անհրաժեշտութեան, փրկութեան գործին ձերք կը կարկառէ, իր նիւթական օժանդակութիւններով։

Աւելորդ չէ յիշել թէ՝ Աթէնքի մէջ կան մի երկու ունեւոր վաճառական ազգներ ալ, որոնք գաղութիս թաղական ազգներն ալ են. այս մեծապատիւները (!) քացուած հանգանակութեան չը մասնակցելէ զատ, հրէական բարոյախօսութեամբ մտքեր պատրելով իւանդարել ուզեցին, բայց հասարակութիւնը —հակառակ իր անանձնական նիւթականին— իր պարտաճանաչութեան հետ միացնելով առատաձեռնութիւնը, արհամարհանքի խոշոր ապտակ մը տուաւ ազգների երեսին, —եթէ այդ արարածները ունին ամօթոյ զգացումը—։

Դաշնակցական ընկերները նմանապէս խորհուրդը ունին նոյնանպատակ հանգանակութեան մը ձեռնարկել Յունաստանի ուրիշ հայաշատ շրջանները, կը յուսանք թէ նոյնքան յաջողութեամբ ի գլուխ պիտի բերեն և այս ձեռնարկը։

Գովելով Յունաստանի գաղութի մեր հայրենակիցները Դաշնակցական ընկերների հետ կը ցանկանք, որ ժողովուրդ թէ՝ յեղափոխական ձեռք ձեռքի տուած շարունակեն իրենց բարոյական և նիւթական աջակցութիւնները ի նպաստ ազգային դատին, առանց անգամ մը եւս վերադառնալու դէպ այն խորին մեռելութիւնը, որը դժբաղդաբար տիրել էր Յունաստանի հայութեան վրայ անխարտիր։

Սնցորդ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՆՈՐ ՀԱՒԱՔԱԾՈՆ

Մօտերս, Պարիզում լոյս տեսաւ Պ. Գալուստ Բոյաճեանի հաւաքած և ձայնագրած հայ ժողովրդական երգերի պրակը, հայերէն և ֆրանսերէն լեզուներով։

Ուրախ ենք յայտարարելու որ այս անգամ երգերը իրապէս ժողովրդական երգեր են և եւրոպացին կարող է գաղափար կազմել մեր զուտ ժողովրդական երգերի արժէքի մասին։

սին, ինչ որ յաւիտենապէս անփոփոխ փայլում ու լոյս է սփռում աշխարհի վրա, ինչ որ միանգամայն չատ պարզ ու չատ բարդ է, ինչ որ միակերպ կախարդում է թէ գիտնականի եւ թէ տգէտի սիրտը։...

Բոյագիրը երգեց երկար ու տխրած. քամին նրա երգը թոչնելով տարածում էր ամայութեան մէջ եւ ձիւնակոյտերի վրա։ Ու ոչ ոք չէ լսեց այդ երգը. միայն կիսով չափ ձիւնի մէջ թաղված եղջերուները իրենց խելացի եւ չարժուն աչքերով դիտում էին իրենց տիրոջը. կա, ծեսնրա երգածը հասկանալով։

Երբ Բոյագիրը վերջացրեց երգը, վերջացաւ եւ պուրդան։ Նա վեր կացաւ, ձիւնի կտորները թափ տուեց վրայից եւ շուրջը նայեց. Սահնակի վրայից կախվել էր ինչ որ ֆպիտակ մարմին. ու կարծես ձեռքերը տարածելով ուզում էր սահնակը. եղջերուներին եւ սրանց տիրոջը միասին գրկել. նեսել ձիւնակոյտի մէջ եւ իր ծանրութեան տակ ճզմել։

Բոյագիրը նայեց եղջերուներին, երկնքին, որ ձիւնակոյտի էր նմանում, ու հմայրութիւնը կորցնելով փնթփնթաց, «մինչեւ ե՞րբ պիտի տեւէ այս»։ Նա բռնեց սահնակը, ուզեց ձիւնի միջից դուրս քաշել. բայց այդ վայրկեանից կախված սպիտակ զանգուածը յարձակվեց նրա վրա եւ գետին տապալեց։

Բոյագիրի աչքերը մթնեցին. նա ձիւնի տակ թաղվեց. փոսը, ուր նա պաշտպանվում էր պուրգայից, ձիւնով լցվեց։ Բայց ձիւնը հող չէ. իսկ սամօեդը ինքզինքը ձիւնի մէջ այնպէս է զգում, ինչպէս ձուկը ջրում. ձեռք ոտքը շարժելով Բոյագիրը լոյս աշխարհ դուրս եկաւ։ Ձիւնի կտորները աչ ու ձախ էին թռչում ու շուտով սպիտակ զանգուածի միջից որոշվեցին Բոյագիրի բրդոտ գլուխը եւ ուսերը. նա սկսեց ձիւնի փոսի միջից երկինքը դիտել. այժմ ձիւնակոյտի փոխարէն նրա գլխի վերում կամարած էր երկնքի կապտագմբէթը. գմբէթի վրա փայլում էին աստղերը որոնք երկիրը ցողում էին կայծերով, իսկ կայծերը սփռվում էին ձիւների վրա...

Այլակերպումը այնքան արագ կատարվեց, որ նախապաշարված սամօեդին թվաց թէ արշալոյսի եւ աստղերի փայլուն ոգին երկինք դուրս գալով յաղթահարեց փոթորկի խոժոռադէմ ոգուն, որ ձիւնակոյտի կերպարանք էր ընդունել...

Աստղաղարդ գիշերին որչափ մարդ լաւ է զգում հոգու խորքում. Բոյագիրը դուրս ցատկեց ձիւնակոյտերի միջից ու եղջերուների եղջիւրներից բռնելով նրանց կապեց աղեղին ու ճչաց։ Սահնակը, թանկագին բեռով միասին, բարձրացաւ ձիւնախմբերի վրա եւ այն տեղից սահեց ձորակի մէջ ուր դեռ աշունից սկսած պարկած էր պինդ սառած ձիւնը։ Այդ տեղը Բոյագիրը եղջերուների սարքը կարգաւորելուց յետոյ նստեց սահնակը։ Եղջերուները շարժվեցին սիրով եւ իսկոյն նրան, հոտառու ուներները ծիր հոտը առան։ Մօտակայ բլրի ետեւում, ուր մի քիչ առաջ հրահրված էր երկինքը եւ ձիւնը բորբոքված, գտնվում էր երիտասարդ սամօեդի բնակութիւնը։ Լուսը ծագել էր արդէն երբ Բոյագիրը մտաւ իր բնակավայրին։

Լուսինը կախ ընկած գժգունում էր. հազիւ նշմարվող ամպերի քուլան թափանցիկ շղարշի նման սահում էր նրա ճակատովը. որը դեռ արտացոլում էր պայծառ գիշերվան անուրջները. որչա՞փ լաւ են այդ անուրջները, ու որչափ գնահատելի են նրանք տունդրայի վայրենի զաւակի համար. որը սովոր է աստղազարդ գիշերների առանձնութեան։ Նրա առջեւ ձգվում է անչափ հեռուն, շուրջը անսահման լայնութիւնը, բարձրը՝ աստղերով բոցավառված ու փալփլուն կէսգիշերային փայլումի անդրադարձումներով։

Երգերը թուով տասը են և բաւական յաջող զատված. Ներանցում արտայայտվում են գրեթէ ժողովրդի բոլոր տեսակի զգացմունքները։

Երգերը դաշնամուրի համար ներդաշնակել է Պ. Ա. Մէրիէքս, ներածութիւնը գրել է Պ. Պիէր Օբրի, իսկ ֆրանսերէնի վերածել Պ. Արշակ Զորանեան։ Շնորհակալութեան արժանի են այս գործի համար բոլոր աշխատողները։ Բայց լոկ շնորհակալութիւնով գործ չի առաջ գնայ, մանաւանդ այս տեսակ դժուարին ու սուղ գործերը. հայ հասարակութիւնն էլ պէտք է աշխատի այս տեսակ հրատարակութիւնները սպառել։ որպէս զի աշխատողները չը վհատվին ու շարունակեն։

Այս հաւաքածոյի գինը կարժէ 5 ֆրանք, և ամեն մի հայ ընտանիք, որը դաշնամուր ունի, պարտաւոր է այդ ժողովրդական երգարանը ունենալ և իր տան մէջ հայ ժողովրդի երգերը լսելու և սիրելու վարժվել։

Երգարանի կողքը զարդարված է մի սիրուն նկարով, որը գծել է նկարիչ Պ. Ա. Ֆէթվաճեան։

Գնել փափաքողները կարող են դիմել Paris 2 Rue du Louvois, chez M. Demetz 5 ֆր. 50 սանթիմ ուղարկելով կամ թէ Tiflis Caucase chez M.Sousanadjian, magasin musique 2р. 25 կոպէկ ուղարկելով։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն Վիէննա կը հաղորդեն, որ Հայաստանէն եկած հեռագրի մը համաձայն Սասունի մօտերը, Կէլիկուզանի, գիւղի քով, արիւ-

---

Հեռուն՝ լուսածագի կապտագոյն մշուշի մէջ ըմկղված, հալիւ երկրին հպած, արդէն աստաքիզոյն մէջի միջով, արտացոլում է արշալոյսի շողումները, շուրջը ամրողջովին արծաթազօծ է։

Ամեն ինչ անշարժ է. սակայն այդ անշարժութեան մէջ մահ չկայ. այլ քուն։ Զրկայ եւ լռութիւն անապատի երեւութական անշարժութեան մէջ. ով որ երգում է երկնքում. ով որ հառաչում է ձիւնակոյտերում. ով որ շարժվում է լոյսի մէջ... Եւ հեռուն եւ բարձրը եւ շուրջը լի են խորհրդաւոր ձայներով, խորհրդաւոր հառաջներով, հանելուկային ուրուականներով։ Անապատը չէ մեռած, այլ ապրում է. բայց առասպելական կեանքով, որում չկան որոշ ձեւեր ու սահմաններ. ուր ամեն ինչ շփոթ է, խորհրդաւոր եւ իմի ձուլված անուրջների գեղգիտակի մէջ... Լուսնի շողերի միջով սահում անցնում են թեթեւ օդային ուրվականներ. նրանք նստոտում են ձիւնակոյտերի վրա. դուրս են նայում ձիւների միջով, թագնվում են առվակների ճեղքվածներում եւ մացառներում, որոնք սողում են երկրի վրա...

(Շարունակելի)

նահեղ ճակատամարտ մը տեղի ունեցեր է հայ ապստամբներու և թուրք զօրքերու միջև. երկու կողմէն ալ բազմաթիւ սպաննուածներ կան. գերի բռնուած են 40ի չափ ապստամբներ, միւսները լեռները փախեր են. զօրքը գրաւեր է ապստամբներու դիրքերը(*)։

ՌՈՒՍԻԱ

25 ապրիլին Բեթերսպուրկէն կը հեռագրեն որ ցարը շարած է պատերազմի դաշտէն ամէն օր եկած անյաջող լուրերէն։

Քանի մը օր առաջ Բուրօքաթքին հեռագրած էր որ ամէն միջոց ձեռք առնուած է ցամաքին վրայ թշնամուն դիմադրելու, գլխաւոր հրամանատարը վստահացուցած է որ ռուս ամրութիւնները անմատչելի են ճաբոնացիներուն։

Ցարին հիասթափումը մեծ է. Ալէքսիէվին հրամայած է խիստ քննութիւն կատարել պատերազմի անյաջողութեան պատճառները հասկնալու համար և մանրամասնօրէն տեղեկագրէ։

—Վարսովիէն կը հեռագրեն որ մայիս 3ին, լեհական սահմանագրութեան հռչակման տարեդարձի օրը խռովութիւններ եղած են. մօտ 1000 հոգի ձերբակալուած են և մէկ ուսանող սպաննուած։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Ճաբոնցիք մեծ ճակատամարտ մը վերջը, գլուեր են Ֆին-Խուանկ-Զանկը։

Ռուսները քաղաքէն հեռացան մեծ կորուստ տալէն ետքը։

—Բեթերպուրգէն պաշտօնապէս կը հաղորդուի որ ռուսներուն կորուստը վերջին ճակատամարտի մէջ եղած է. 45 սպաներ և 500 զինուոր անյայտացած են. 7 սպայ և 672 զինուորներ սպաննուած են. 952 զինուորներ և ըսպաներ վիրաւորուած են։

—Թոքիօէն Պէրլին-Թակպլաթի կը հեռագրեն որ ճաբոնացիները Եանկ Սէպունի քով ճակատամարտ ունեցեր են 4200 ռուս զօրքերու հետ, որոնցմէ մեծ մասը սպաննուեր են, իսկ չորս հարիւրն ալ գերի են բռնուեր։

—Ճաբոնացիները գրաւեր են Դալնին, ինչպէս և Բօրթ-Արթուրի քովը Բօրթ-Պատամը։ Երկու քաղաքներ են ալ հաղորդակցութիւնը բոլորովին խզուած է ռուսական միւս քաղաքներէն և զօրքէն։

Ծ. Խ. Ինչպէս կերեւի այս լուրը կրկնութիւնն է Կէլիկուզանի քով կատարուած ընդհարումի մասին վերը տուած տեղեկութեան։

Ամիրալ Թոգո կը հաղորդէ թէ վերջին փորձը յաջողած է. և Բօրթ-Արթուրին նաւահանգստին մուտքը բոլորովին գոցուած է. մակոյկ մը հազիւ կարենայ անցնիլ։

—Բօրթ Արթուրը պաշարուած է և ցամաքէն։ Ամիրալ Ալէքսիէֆ իր սպայակոյտով հեռացած է Բօրթ Արթուրէն։ Կը կարծուի որ Բօրթ Արթուրը երկար չը պիտի կարենայ դիմանալ։

Բէօթէրի գործակալութեան Նիւչվանկէն կը հեռագրեն թէ՝ ինչպէս կերեւի ռուսները որոշած են թողուլ և Նիւչվանկը, որովհետեւ կը քանդեն ամրութիւնները, իսկ զօրքին մեծ մասն ալ մեկնած է. կը մեկնի և ռուս բնակչութիւնը. օտարները ապրսափի մէջ են։

—Ռուսական երեք թերթերու թղթակիցներ սպաննուած են Եալուի ճակատամարտին մէջ։

ԱՆԳԼԻԱ

Թիմլայէն Լօնտոն կը հեռագրեն որ անգլիական արշաւախումբը Թիպէթցիներուն հետ ընդհարում ունեցեր է. 100 թիպէթցիներ սպաննուեր են, 150ի չափ ալ վիրաւորուեր։

ՀԱՅԵՐԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Վաղ գիշեր, Նատէժտա խումբը Պ. Պապաեանի ղեկավարութեամբ հայերէն լեզուով պիտի ներկայացնէ «Հաւատք, Յոյս, Սէր» տրամը։

Նոյնպէս տեղի պիտի ունենան հայկական կեանքէն պատկերներ։

Բաւական ժամանակէ ի վեր Վարնայի հայ հասարակութիւնը զուրկ է հայերէն ներկայացում տեսնելէ, վաղը ուրեմն իրեն առիթը կը տրուի այդ բաւականութիւնը ստանալ։

Կը յուսանք թէ թուրքերէն ներկայացումներէն աւելի հոգ հայ բազմութիւն մը պիտի գտնուի հոն։

Վերջապէս ժամանակ է որ Վառնայի ստուարաթիւ հայութիւնը իր պահանջներէն մին դարձնէ հայերէն ներկայացումներ ունենալ, հայ դերասաններէն հայերէն խօսքեր պահանջել։

Պատուարժան խմբագրութիւն

Շարժում Լրագրոյ

Հաճեցէք ներկայս հրատարակել Ձեր յառաջիկայ թերթի մէջ։

Տեղւոյս Սղբ. ընկ. ընդհանուր ժողովը որ ապրիլ 25 կիւրակի օր տեղի պիտի ունենար մեծամասնութիւն գոյացած չըլլալուն յետաձգած է յառաջիկայ կիւրակէ մայիս 2ի կէսօրէն առաջ ժամը 10ին Ակգ. վարժարանի մէջ։

ՕՐԱԿԱՐԻ

Ա.— Վաւերացումն նախորդ նստի ատենագրութեան,

Բ.— Համարատուութիւն տնօրէն խորհրդոյ,

Գ.— Առաջարկներ,

Դ.— Հրաժարական Գործնական ժողովոյ,

Ե.— Նոր ընտրութիւն եթէ հարկ դատուի։

Կը խնդրուի պատուարժան անդամներէ որոշեալ օրը ներկայ գտնուիլ, հակառակ պարագային ներկայք մնծամասնութիւն համարելով ատեանը պիտի բացուի։

Դիւան Ազգ. Ընդհ. ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ

Պ. Քիւրճեան Նշան Սմիրճեան

Վառնա 26 Ապրիլ 1904

(ԿՆԻՔ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԼՕԶԱՆ, (ԶՈՒԻՑԵՐԻԱ)

—)(o)(—

Հայկազեան վարժարանը կընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ ազգային և եւրոպական լուրջ, առողջ և հիմնական կրթութիւն։

Հայկազեան վարժարանը ներկայ վեցամսեայէն սկսեալ հինգ աշակերտ պիտի ընդունի մեծ զեղչով։

Վարժարանիս տնօրէնը յանձն կառնէ նաեւ հայ օրիորդներ պատուաւոր ընտանիքներու մէջ զետեղելու ինչպէս և անոնց բարոյական և իմացական կրթութեան վրայ հսկելու գործը։

Դիմել հետեւեալ հասցէին՝

Մ. Նալպանտեան

Ինսթիթիւթոր Արմենիեն

Լօզան, (Սուիս)

ՍՐԱՀ ՍԱՔԷՏԻՆԷԻԻ

«Նատէժտա» հայ դերասանական խումբը վաղը գիշեր պիտի ներկայացնէ Տ. Վ. Պապաեանի առաջնորդութեամբ։

ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ, ՍԷՐ

Բարոյալից թատերախաղ 6 արար.

—)o(—

ՍԱՍՈՒՑ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ ՇԱՒԻ

Պիտի արտասանէ Տկ. Լ. Յակոբեան

ԳԻՆԵՐ

Ա. կարգ թուաւոր 1,50 ֆր. Բ. կարգ 1 ֆր. կալորի 50 սանթիմ

300,000

ՖՐԱՆՔ

Ամէն անոնք՝ որ օրական կէս քիլօ հաց կառնեն՝ կը մասնակցին վերգրեալ մեծ պարգեւին, որ պիտի քաշուի Մայիս 19ին Պոլիս։

Հարստանալ ուզողները՝ թող բարեհաճին հասցէներնին մեզ ղրկել Զարպհանէլեան գրատան միջոցաւ։

Հ. Մ. Կիւմիւշճեան

1904 Ապրիլ 18

Վառնա

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна